


3183



1911

4827  
2192  
5915

1911 ՀՀ 2140

ԲՈՅԱԿԻՈՒՄ Ե ԶԲԵ

441

# ԺԵՆՏԱԼԻՑ ԿԱՌ 20ԻՄԸ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ПОСТОНОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կազմեց Ալեքսանդրապոլի ժողովրդի համար

Խ. 81.0-Ի00.Հ0.Կ0.63




ԱԼՔՎՈՋՆԴՐԱՊՈԼ

Արագածիպ-տպարան «Շիրակ»

1911

002



2010

ԱՐԵՎԱՆ, ԽԱԿ

616.9

S-40

ԳՐԱԴԱՐԱՆ

# ՀՅՈՒՋ ԱՄ ՀՅՈՒՋՅԵ

ՀՅՈՒՋՅԵ  
ԱՐԵՎԱՆԻ  
ԱՊՈՀԵՑՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ԳՀՀ

ՀՅՈՒՋ ԱՄ ՀՅՈՒՋՅԵ

ՀՅՈՒՋ ԱՄ ՀՅՈՒՋՅԵ



# ՓԱՌԱԽ ԿԱՌ ԶՈՒՄԵ

ՀՅՈՒՋՅԵ  
ԻՆՍԻՏՈՒՏ  
ՅՈՒԺՈՒՅԵՆԱ  
Ակադեմիա Խառն  
ՀՍՀ

Կազմեց Ալեքսանդրապոլի ժողովրդի համար


Յ. Ն. ՏԵՐ-ԽՈՍՀԱԿԵՅՆ



ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Արագատիպ-տպարան «Շիրակ»

1911



19-484  
MICHIGAN  
UNIVERSITY  
LIBRARIES  
DETROIT

49831-mh



136352-66

«Թէ ալկոհոլիզմի և թէ ուրիշ բռլոր վարակիչ հիւանդութիւնների դէմ կռուելու առաջին պայմանն է ոչկլամշ, բառիս ընդգարձակ նշանակութեամբ։ Հարկաւոր է անվերջ կրկնել այն վնասը, որը առաջ է գալիս յիշեալ ախտերից։ Սյստմի սէկլամներ պէտք է տեղաւորել գեղատոմսերի, զանազան տեսակ պայմանագրերի, տետրակների ու դասագրքերի վրայ, նաև այն բռլոր արկդների երեսին, որանցով ծախւում են ծխախոտ և զանազան իրեր, երկաֆծուլիների տօմսակների, երեխանց խաղալիքների և մինչև անգամ շուկաներում ծախւուղ թաշկինակների վրայ։

Անհրաժեշտ է, տնիերի պատերի վրայ ահա-  
զին տառերսվ գրել բոլոր սպառնացող վտանգ-  
ների մասին և նոյնիւ յաճախակի տպագրել  
պարբերական թիրթերում և այլին:

Մէ խօսրով անհրաժեշտ է զօրեղ, ձանձրացուցիչ, բարձրագույն ուշկամ, այնպէս որ ոչ ոք չկարողանայ անցնել փողոցով, կառը մտնել, ձեռքին տանել լրադիր, որ շհանգիպի այն պարզ մտրին, որը դուք ամեն կերպ աշխատում էք ներշնչել ժողովրդին»:

*ροφ. φοιτη*

Համակրելով սրօֆ. Թօլէտի վերոյիշեալ  
կարծիքին և համոզուած լինելով, որ ժողո-  
վրդին քանի յաճախ և շատ կրկնես միկնոյն  
միտրը, այնքան նա լաւ և չուտ կրմրանէ ա-  
ստծը, թոյլ տուինք մեզ կազմել նորից մի  
գրույկ ժանդախոտի մասին, չնայելով, որ այդ  
բովանդակութեամբ կայ արդէն մի երկու ժո-  
ղովրդական հրատարակութիւն:

## Տ.-ԻԱ.

Ա ամեն մասնաւու պար առ առ զայի  
նորուար և ուստի ու առ նույնան խորը  
բարձր արարական պատճենահաջող զայի  
նորուար նարեւ մշտի և վաճառքարայ  
զայի վաճառքարայ ուստի և ուստի  
բարձր պատճենար պար ըստ նորուար մեր  
նորուար պատճենար պար և պար զայի  
զայի առաջային մարտադրություններ  
ուստի զայի և աշխաղության նորուար Ա  
ու այսին առաջ շարանքար զայի ուստի  
զայի նորուար մասն առաջ զայի ուստի  
զայի զայի պար պար մասն զայի մասն  
զայի ուստի զայի ուստի զայի ուստի զայի

## ԺԱՆՏԱԽՏ ԿԱՄ ԶՈՒՄԵ

Ոչ մի տարափոխիկ հիւանդութիւն այն-  
պէս սոսկալի անուն չունի, ինչպէս հուլերան  
և ժանտախտը կամ չուման, մանաւանդ վեր-  
ջինո, որին Ժողովուրդն անուանում է «մարդ-  
կային մտրակ» կամ «սե մահ»: Ժանտախտն  
այս անունն ստացել է իւր աւերիշ բնաւորու-  
թիւնից, որովհետեւ թէ հին և թէ նոր ժամա-  
նակներում, ուր որ նա յայտնուել է, թողել է  
իւր յետից անմարդաբնակ գիւղեր ու քաղաք-  
ներ, նոյն իսկ ընդարձակ նահանգներ:

Ըմեն անգամ, երբ անպատճաստ ժողո-  
վուրդը ենթարկուել է այս սարսափելի մահ-  
տարածամին, միշտ զուխը կորցրած՝ սկսել է  
փախչել իւր տուն ու տեղից, մի կերպ կեան-  
քըն աղատելու յուսով:

Ժանտախտը տարափոխիկ (կաղսովական)՝  
հիւանդութիւն է: Նա փօխւում է հիւանդի  
ու մեռածի կամ նրանց շորերի և իրեղինների  
միջոցով: Ժանտախտի թոյնել բամին չի կա-  
րող միւսից միւս տեղը տանել: Երբ որ մի

տեղ ժանտախտ է երեսում, պէտք է հաստատ գիտենալ, որ հիւանդութիւնը անպատճառ ներս է բերուած վարակուած երկրից եկած մարդկանց կամ ուզարկուած արթանքների հետ։ Նա գիւղից գիւղ, քաղաքից քաղաք անցնելով տարածւում է հեռու երկրներ, կլանելով միլիոնաւոր զոհեր, ուր ազգաբնակութիւնը ապրում է կեղտոտ և անմաքուր տեղերում և վարում է առողջապահական կանոններին հակառակ կեանքր։ Բայց, չնայելով ժանտախտի սոսկալի բնաւորութեանը, նրանից կարելի է պաշտպանուել և վարակուած դէպրում էլ բժշկուել։

Այժմ ամենեին չեն կասկածում, որ այն երկրներում, որտեղ ժօղովուրդը խելացի և մարուր կեանք է վարում, ժանտախտը չի կարող տարածուել և եթէ որ և է կերպով մուտք գործէ, այնուամենայնիւ մեծ վնաս չի կարող տալ, որովհետեւ ժօղովուրդը վիտակցօքէն պաշտպանուած է հիւանդութեան դէմ և չի համարիլ այն «Ըստծու պատիժ» կամ թէ «գառն ճակատագրի արդիւնք»։

Մի ժամանակ կարծում էին, թէ ժանտախտի բունը եղիպտոսի նեղոս գետն է, ինչպէս որ Գանդէսը խոլիրայի համար։ Սա-

կայն վերջին ուսումնասիրութիւնները ցայց տուին, որ բացի Եգիպտոսից, Հնդկաստանի սրբազն գետը, Գանգէսը, բուն է թէ խոլերայի և թէ ժանտախտի։ Ժանտախտը բաւական հին հիւանդութիւն է։ Եյս ախտը կար գեռ Քրիստոսից 2-3 դար առաջ, որի մասին գրել են ժամանակակից պատմիչները։ Քրիստոսից 542 տարի յետոյ, ժանտախտը Եգիպտոսից անցել է Եւրոպա և մեծ վնասներ է հասցըել։ Բայց նա ոչ մի անգամ այնպէս սոսկալի աւերում չէ առաջացրել, որքան որ XIV-րդ դարում։ Եյս ժամանակ հիւանդութիւնն սկսուել է։ 2ինաստանում, այնտեղից փոխուել է Հնդկաստան, Պարսկաստան, Իսկ յետոյ Կովկասի վրայով անցել է Մուսաստան, Լեհաստան, Գերմանիա, Փրանսիա, Իտալիա և Սպանիա։ 13 տարուայ ընթացքում համաձարակ հիւանդութիւնը կոտորել է Եւրոպայում 25 միլիոն մարդ, իսկ եթէ հաշուի առնուի նաև Ասիայի բոլոր երկրներում կոտորածները, կոտացուի 43 միլիոն մարդ։ Եյսպիսի մեծ կոտորած չի եղել և չի լինիլ ոչ մի պատերազմի և ոչ մի ուրիշ վարակիչ հիւանդութեան ժամանակ։ Յիշեալ համաձարակը Եւրոպայում շարունակ կոտորում էր թոյլ կերպով մինչև

17-րդ դարը, իսկ այդ ժամանակ նա կրկին ստացաւ լայն ծառալ, միայն Լոնդոնում կոտորեց 68,000 հոգի: Այս գեղքից յետոյ հիւանդաւթիւնը երեցի է, միայն Եւրոպայի ծովափնեայ քաղաքներում, եթէ շհաշտենք Մոսկուայի գեղքը 1771 թւուին, երբ օրուկան կոտորւում էին 600—1000 հոգի, զերեղման տառելով քաղաքացիներից 56,000 հոգի:

Ես սաստիկ գեղքերը հետզհետէ դարձին սոսումնականների ուշադրութիւնը իրանց վրայ և շնորհիւ հիւանդաւթիւնների ուսումնաբրութեանը, ժողովուրդը քանի գետում աւելի ու աւելի ապահով է գոռում իրան այդպիսի սոսկալի կոտորածներից: Վերջին գարում թէ պետ և պատահել են անհրեղ հատ համաճարակներ, բայց ոչ մէկը այնպիսի միծ ծառալ չէ ընդունել, ինչպէս լինում էին առաջ: Յիշենք այս դարսում պատահած գեղքերը: 19-րդ դարի առաջին կիսում թուրքիայի մէջ մի քանի անգամ կրկնուել է ժանտախուը թէ ծովափնեայ քաղաքներում և թէ երկրի ներնք: 1802 թուրին նա երեաց թիվյիսում զօրքի մէջ: 1805-ի համաճարակը օրուկան 400 հոգի զօհ էր տանում Երզրումում, 1828 թ. ժանտախուար կրկին երեաց Կովկասում զօրքերի մէջ,

Երբ նրանք վերադարձոն կրկոււմի և Պարսի պաշարնեմից յետոյ: Վերջին անգում նա ներս եկաւ միկ մօտ 1841 թուրին և հասաւ մինչե Կարս, Սլքրսանկրապոլ, Երեան: Ժանտախում և նրա շրջակայրում ժանտախուից միունք մօտ 70,000 հոգի: Եյսպիսով 1802—1843 թիւը ժանտախուը շարունակ կրկնուելով՝ անցելէ Կովկասի գանազան քաղաքները և մեծամեծ վնասներ և հասցրել բնակիչներին: 1879 թ. ժանտախուը յայտնուեց շաշտարխանի Վերիեանկա գիւղում, բայց իսկայն կարողացան առաջն առնել և շտարածւեց: Սրանից 7 տարի առաջ ժանտախուը նորից երեան եկաւ արհելիս երկրներում և մի քանի շաբաթուայ մէջ 2ինաստանի մի քայլարում միունք 60,000 մարդ: Կանան քաղաքում 100 հիւանդից 95-ը մխանում էին: Այս համաճարակը 2ինաստանից ակցաւ շնորհանուան և ամենից առաջ երեաց Բամբէյ քաղաքում: Բամբէյը ծովափնեայ քաղաքը լինելով՝ վարակուեց եկուոր նաւերից: Փանտախուի ներս սպառուեին սկզբում աննկատելի եղաւ, ինչ յետոյ հետզհետէ սուր էր երապարանը ստանալով՝ հինգ-վեց տմուի բնիժացրում կոտորեց 15,000 հոգի:

1899 թուրի յուլիս և օգոստոս ամիսներին

ժանտախտը յայտնուեց մեր երկրի սահման-ներում, Կոլոբովկա գիւղում (Հաշտարխանի նա-հանգում): Անմիջապէս միջոցներ ձեռք առան-նրա առաջն առնելու, և բարեբախտաբար կա-րողացան վարակման գէմ կռուել: Վերջին տա-րիներու նա բոյն է դրել մեր երկրում—Օդես-սայօն և մի բանի ուրիշ կենտրոններում, զիսա-ւորապէս չինաց սահմանին կից բազարներում ու սպասնում է տարածւել Թուսաստանի խոր-րը: Իհարկէ, կառկած չկայ, որ շատ հեշտու-թեամբ կարսդ է մուտք գործել և մեր բազա-րը, մանաւանդ անցնելով Օդեսայից Բայֆում, Թիֆլիս ու Ելեքտրոնդրապօլ: Այս հնմագրու-թիւնը շատ հաւանական է, չնորհիւ երկա-ժուգային հազարգալցութեան:

Ուրեմն ինչպէս տեսնում ենք, ժանտախ-տը հեռու չէ մեզանից: Մ'ուում է, որ մենք զգուշութեան միջոցներ գործ գնենք վատանգի շննթարկուելու համար և աշխատենք հէնց ըս-կըրից նրա տարածման առաջն առնել, գործ դնելով այն միջոցները, ինչ որ սովորեցրել է մեզ ժամանակից զիտութիւնը:

Գիտնականները արդէն հաստատ գտել են, որ ժանտախտը միւս վարակիչ հիւսն-դութիւնների, օր, խօթերայի, զիփտերիտի,

ափի նման, ունի իր վարակիչ թօյնի, որ ստացւում է բացիներից կամ միկրոբներից: Միկրոբները մտնելով մեր կազմուածքի մէջ, արտապրում են իրանցից թօյն և այդպիսով թունաւորում են մեր արխնը և բայրայելով կազմուածքը, մաս առաջացնում: Ժանտախտի, ինչպէս և բոլոր միւս վարակիչ հիւսնդութիւնների միկրոբները հասարակ աշբով անտեսա-նելի են և միան խռովացացավ նրանց կարե-լի է զիտել: Այս միկրոբը կամ բացիլը հիւան-դից կամ նրա իրեղնեներից անցնում է առօգ-չին, աճում է նրա մարմնի մէջ և թունաւո-րում նրան: Ժանտախտի միկրոբը զանուում է զիսաւորապէս հիւանդի ուռուցքների մէջ, ո-րով կարելի է վարակել նայն իսկ կենդանինե-րին, եթե թօյնը սրուխում են նրանց կաշուի տակ: Միկրոբի աճելուն նպաստում են այլ այլ տեսակ ներուսուկ նիւթեր, բայց նա աւելի արագ բազմանում է կենդանիների մէջ, որով հետեւ նրանք այդտեղ գտնում են զարգանալու ամենապատիշ թէ, մնունդ և թէ հարկաւոր տաքութիւն: Կենդանիների կազմերից ամենից զգայուն է մկնեցնի կազմը և նկատուած է ընդհանրապէս, որ համաձարակիների սկզբից թէ զաշտերում և թէ տներում, նրանք դուրս

են թափում բներից, թքում են արին ու սատկում Բաւակտն է, որ մէկ մուկ վարակուի ժանտախտով, նրա մարմնը խոկոյն կուտն միւսները և այդպիսով շատ շուտ ամրող շրջակալրի միները կժաւնաւորեն: Ճատ անգամ հիւանդանալուց նրանք փորբութիւն են ստանում և այդպիսով ապականում և տարածում միւրոբները ամրող շրջակայը փախչելով մի անից միւս տունը: Իսկ մենք կարող ենք արգեօք ապահով լինել, որ մէր պատուհանները, որտեղ ուտելիք ենք պահում, ազատ կլինեն նրանց գիտիներից: Համլանալի է, որ որանք մէկ տանից միւս տունը մտնելով տարածում են հիւանդութիւնը: Համաձարակի տարածուելուն խիստ նպաստում են լուերը և ճանձները: Մրանք նստում են հիւանդի վրայ, ապա թռչում նստում են առողջի վրայ և կըծելով նրան, վերը են բաց անում և հիւանդից բերած թոյնը մտցնում են նրա մէջ:

Որովհետ կենսանիները ազատ շեն վարակուելուց և վարակումը տարածելուց, ուստի համաձարակի միջոցին օրէնքով պահանջում է տնային կենսանիներին, թռչուններին կամ առանձնացներ և կամ կոտորել, այսպէս օրինակ՝ կոտորում են չներին, հաւերին, կա-

տուներին և այլն: Փանտախտի և առնասարակ բոլոր միկրոբների բազմնալուն նպաստում է խօնաւողը, հողը և անմարրութիւնները, այն ինչ լոյսը և չորութիւնը աննօպաստ պայմաններ են միկրոբների համար: Այս իսկ պատճառով անհրաժեշտ է ապրել լուսաւոր և չոր ընակարաններում, քանի որ նեղ և խօնաւ բնակարանները համաճարակի ժամանեակ միշտ երկիրականի են: Թէե ժանտախտի համար եղանակները նշանակութիւն չունին, բայց և այնպէս նկատուած է, որ ամառուայ շոգերին երրեմն ժանտախտը թաւլանում է շնորհիւ չոր օդի: Միկրոբները մեռնում են բարձրաստիճան տարութեան մէջ, ուստի եռացրած ջրերի ու եփած կերակուրների մէջ նրանք չեն կարող մնալ: Այս էլ պէտք է ինկատի ունենալ, որ հիւանդութեան թոյնը աճում է ոչ միայն հոդվածներուին, այլ և նրա տակի շերտերում, միքանի մատնաշափ խորութեամբ:

Արդէն առացինք, որ ժանտախտը ընաւորութեամբ նման լինելով միւս վարակիչ հիւանդիւններին, ունի նրանց պէս զարգացման զաղանի և յաւանի շրջաններ, սրբնիթաց և թեթև գէպրեր: Հիւանդութեան գաղանի շրջանը

տեսմ է 7—15 օր։ Այս միջացում հիւանդն ամենեին չի զգում իր վարակուելը, բացի թեթև թուլութիւնից։ Բայց գաղտնի շրջանն անցնելուց յետոյ հիւանդութիւնը երեան է գալիս և սաստիանալով տեսմ է 3—5 օր։ Առ հասարակի նկատուած է, որ եթէ հիւանդն այս 3—5 օրը յաջող անցկացրեց, ապա յուսալի է, որ կառողջանայ։

Այժմ անցնենք հիւանդութեան նկատութեանը։ Ժանտախում հիւանդացոյն ըսկպում գողացնում է, և զողը տեսմ է 2—3 ժամ, իսկ յետոյ սկսում է տարացնել, որից ուժապառ է լինում։ Հիւանդը գանգաւում է թուլութիւնից, զգում է սաստիկ ծարաւ, նրա աշրերը արխնութ լցում են, տրամադրութիւնը վատանում է, կրծքի վրայ ճնշումն է զգում, սիրտը խառնում է, մազձը լինում է զեղին։ Սիրտը քանդուելուց յետոյ հանդսուանում է, սակայն այդ հանդսուանը մի տեսակ թմրութիւն է, որ նրան ձգում է անզգայութեան մէջ։ Հիւանդը դէնի է տալիս, չի գագրում անկողնում, ուզում է տեղից փախչել։ Եթէ հիւանդութիւնը ծանր է, ապա հէնց առաջին օրում զուրս են վալիս ուռուցքներ (բուրքն), որոնք մինչեւ հասնելը սաստիկ ցաւ

են պատճառում ուռած տեղերում, աճուկներում, թեերի տակը և պարանոցի վրայ։ Այս տեսակի ժանտախուր անսուանում է ուռուցաւոր ժանտախուր (Ծյօնհնայ շոմա)։ Կայ և միւս տեսակի ժանտախուր—թոքերի ժանտախուր, որի վարակումը առաջ է գալիս թոքերի միջոցների, երբ ներս ենք չնշան թսպի հետ միասին ժանտախուրի բացիլը։ Այդ տեսակը աւելի սրբնիքաց է և վատանգաւոր, որովհետեւ խօսրիսի և լորձունքների հետ միասին շատ հեշտութեամբ միկրոբները տարածւում են թէ օդի մէջ և թէ վարակելով շրջապատօների երեսը, անցնում միբաւորներին։

Ուռուցքները թեթէ գէպրում երեսում են են 3—4 օր հիւանդանալուց յետոյ։ Հիւանդի լիզուն ծածկում է սպիտակ փառով, շարունակում է փխուռմն, կաշին շրանում է, և տաքանում, մէզը և աղը չի կարողանում պահել։

Երբ հիւանդի կազմուածքը ամուր է, կարողանում է ցաւերին պիմանալ, ապա ուռուցքները հանելով թարախակալում և բլչում են։

Խոկապէս մահացու են համարում պարանոցի ուռուցքները, որոնք գեռ չըլած, հիւանդը մեսնում է։ Բացի ուռուցքներից, հիւանդի մարմնի վրայ երեսում են մեծ բծեր,

սրմնը լինում են մուգ կարմիր, կամ կարմազմ և ան գոյնի:

Առաւելցրները գուրս գալուց 1—2 օր յետոյ հիւանդն սկսում է բրանիլ, բրանիլի յայտնում է նախ գլխի վրայ, յետոյ երեսին, ապա կրծքին և բոլոր մարմնին: Հիւանդն ունենում է 40—41° տաքութիւն, որը իշխում է հետզհետէ կամ մի անգամից: Այս ժամանակ հիւանդի տրամադրութիւնը լաւանում է, յաւերը մեղմանում են, տիտրժակը բացւանմ է, ուշը վրան է գալիս և հիւանդը քիչ-քիչ առաջանում է:

Հիւանդութեան ծանր գէպբեռում հիւանդի անհանգստութիւնը շատանում է և նա շարանակ գառանցում է ու յանկարծ մեռնում: Պատահում են գէպբեռ, որ թից, թաքերից արիւն է գալիս, ոտքերին ու ձեռքերը ցնցում են, հիւանդը շուտ-շուտ և համարեա անընդհատ զիրտում է ու մեռնում:

Հիւանդութիւնը եթէ սրընթաց բնաւորնելիքն ունի, հիւանդը մեռնում է 3—4 ժամում:

Մենք նկարագրեցինք հիւանդութեան ծանր տեսակները: բայց յաճախ մարդիկ վարակում են թեթի կերպով, այնպէս որ չէ

կարելի ասել, որ նրանք հիւանդ նն ժանտախով: Այսպիսիներն առաջարարակ ունենում են 38—39°/0 տաքութիւն մօտ 7 օր: Հիւանդութեան նշանները առաջանենք թուլանում են, իսկ երեկոները սառականում: Մարմնի վրայ ուռուցրներն ու թծերը երեսում են 3—4 օրում, որից յետոյ սկսում են քըրտնել և ապա հիւանդը առողջանում է:

Եյապիսի հիւանդներն աւելի նպաստում են հիւանդութեան տարածւելուն: Նրանք ման են գալիս անարգելի իրանց հագործակցութեամբ վարժուում են ուրիշներին և ցաւը տարածում:

Ժանտախով սրընթաց գէպբի նկարագրին այսպէս է անում Լաբէ բժիշկը: — պատերազմի ժամանակ, — տում է նա, — ժանտախով հիւանդները սոսկալի ցիցումով վայր էին ընկնում, նրանց երեսներն այլանդակուում էին, շրմանքներն ուռչում, լեզուն զուրս է գալիս բերանից և միենայն ժամանակ գարշահոտ լորձունք (թուր): Հիւանդների աշքերն անշարժ են ու բնից դուրս ընկած, կաշին զանատ էր: Հիւանդների մարմններ ամբողջապէս հնեթարկուում էր ջղաձգութեան: սարսափելի տանջանքներից կատաղի կերպով գուսում էին և զիտին էին գլորուում: Մենակալուց յետոյ մար-



36392-66

մինները ծածկւում էին թարտիսկակալած բժերով»:

Հիւանդի հասակը և գրութիւնը միջոց նն տալիս առաջուց գուշակել, թէ ինչ ելք կունինայ ժանտախտով հիւանդացողը։ Յայտնի է, որ ժանտախտով համաճարակի սկզբում և վերջում թոյլ է լինում։ Պէտք է ի նկատի ունենալ, որ ուռուցքների յայտնուելը լաւ նշան են, սրովհետեւ ուռուցքները գուրու են գալիս հիւանդութեան երկար տեսլուց, Այս գէպրում ելձէ հիւանդը կարողացաւ 3—4 օր ևս ապրել, ապա յոյս կայ, որ կառողանալ։ Հիւանդի տարիքը մեծ նշանակութիւն ունի ցաւին գիմանալու խնդրում։ Ընդհանրապէս փորբահասակները և հասակաւորները ցաւին գժուար են զիմանում, մինչգեռ միջահասակները լաւ են տանում ցաւի սաստկութիւնը։ Պարանցի ուռուցքները, բերանի կամ փորի արիւահասութիւնը, բժերը նոյնպէս և սաստիկ զառանցելը վատ նշան պէտք է համարել։

Ժանտախտի ժամանակ զգուշութիւնն ալի մեծ նշանակութիւն ունի, քան թէ բժըշկութիւնը, Զատ մարդիկ համաճարակի ժամանակ զօհ են զիացել հենց նրա համար, որ արհամարհել են ամեն խելացի միջոցներ և

անզգայշ են վարուել իրանց սպառնացող վըտանզի գէմ, կարծիս զիտմամբ կամեցել են ցաւը փօրձել։ Պէտք է բարորովին կտրել յարաբերութիւնները վարակնուած աների և թաղերի հետ։ Կասկածելի կարծուած իրերը պէտք է կամ այրել կամ ախտացինջ անել զանազան միջոցներով։ Եխտահանութեան նըստատին է, ոչնշացնել ժանտախտի թոյնը, որը երկար միջոց ապրում է նեխուող ու փթող նիւթերի մէջ։ Հիւանդութեան թոյնը երկար ժամանակ իրանց մէջ պահում են գլխաւորապէս հետեւալ նիւթերը։ — Աշխարի բուրպը, բամբակը, ձիու մազը, մետարսը, զանազան մորթիները, բրդէ, մետարսէ, բամբակէ գործուածքները, սպունզը, թուզիլը, զիրքը, գետութիւնները, հին չորերը, մետաղները, փաղը, ճարպը, չոր մրգերը, ծաղիկները, ալիւրը և այլն։

Ժանտախտի պատմութիւնը ցոյց է տալիս, որ հիւանդութիւնը փոխուում է կաշելով հիւանդից կամ վարակուած իրերից։ Ելձէ կարսղանքը հիւանդին կամ նրա զործածած իրերը մեզանից հեռացնել, վարակման առաջը կառնուի։ Հիւանդի շուրջը եղած օդը վարակւած լինելով, վտանգաւոր է շրջապատսպների համար, Թէպէտ միկրոբներն օդի միջով չեն

անցնում, բայց միանալով օդի մէջ լսզացագ  
անտեսանելի մարմինների հետ օդը ներշնչե-  
լիս՝ մտնում են մեր մէջ և մեզ վարակում:  
Թէ որ տոտիճան հիւանդի իրերը վնասակար  
են, այդ բանին կարող են օրինակ լինել հե-  
տիեալ դէպքերը:

Մի վանքում մեռնում է ժանտախոտվ  
վարակուած մի մարդ: Նրա թվթերը վարկում  
են մի արկդի մէջ ու պահում: Դէպքից չորս  
տարի յետոյ վանահայրը քաց է անում արկդը  
և վարակուում է թվթերից ու մեռնում: Վա-  
նահայրից վարակուում են միաբանութեան միւս  
անդամները ու նոյնպէս մեռնում:

Մի ուրիշ գէպք պատճում է Զմիւռնիա-  
ցում: Այսուղ մի մարդ մեռնում է ժանտախ-  
ոտից, նրա սրգին հօր իրեղէների ծրաբում  
պահում է ու զնում Եւրոպա: Երեսուն տարի  
յետոյ նա վերապանում է Զմիւռնիա և ըս-  
կում է զսրծածել հօր իրերը: Սրանցից նա  
վարակուում է ու մեռնում:

Արդէն վերին ասուեց, որ ժանտախոտը  
կազմնի ըրջանսում շատ զգալի չէ, բայց յե-  
տոյ ստանում է սուր կերպութանը: ուստի  
ցանկալի է, որ համաձարակի ժամանակ թե-  
թե հիւսնդութիւն էլ զգալիս, ասանց զան-

ցառութեան վագորօր բժիշկ հրաւիրուի: Իսկ  
ուր որ բժիշկ չկայ կամ ուշանում է, կարելի  
է զսրծ զնել հետեւալ նախապաշտպանօգական  
միջոցները, նախ և աւաց պէտք է հիւսնդի  
պարկած սենեակը հողմահարել, բաց անելով  
դուռն ու պատռնանը, որպէսզի օդը մարբւի:  
Եթէ հիւսնդը ջերմում է և անհանդիսում է,  
պէտք է օրական մի բանի անգամ թքնել  
մարմինը ջրախան քացախուվ և ցամաքեցնել  
չորսի: Կարելի է նաև ամբողջ մարմինը փա-  
թաթել թքած բաթանով: Գլխի ցաւը մեղ-  
մելու համար, պէտք է սառցապարկ զնել զըլ-  
խին, կամ փաթաթել սառը ջրում թքած  
քաթանով: Սոյն միջսցը կարելի է զսրծ զնել  
նաև զառանցելու գէպքում: Թիի և աճուկների  
ուսուցքներին կարելի է զնել կտաւատի խա-  
չի (թանիսաշ), Եթէ հիւսնդը ամբութիւն ու-  
նի, պէտք է լուծապական տալ: Ծարաւը կտ-  
րելու համար պէտք է տալ սառցի կտարներ,  
սիրտը քանդուելու ժամանակ—սրտի զտալին  
պէտք է զնել մանանեխի սպեզանի (զարշի-  
նիկ): Ուշագնեցութեան առաջն տանելու հա-  
մար, պէտք է հօր քաշել տալ նաշատիրի  
սպիրտ, կամ խմացնել ջրով 20 կաթիլ վալե-  
րիանի կաթիլներ: Որպէս կերակոր կարելի է

տալ հիւտնդին գիւրամարս բաներ. — մոաջուր,  
ձռւ, կաթ, իսկ ոյժերն ամրացնելու համար,  
խմացնել կոնիակ, զինի, արագ կէսը ջուր  
խառնած:

Այժմ ժանտախտի երկիւզը փոքր ինչ  
ըշացել է, համեմատելով առաջւայ հետ. եթէ  
հիւտնդը նոր է վարակուել և քանի գեռ չէ  
սկսուել հիւտնդութեան ծանր շրջանը, կարե-  
լի է յուսալ, որ նրա առաջը կարելի է առ-  
նել, պատուաստելով հիւտնդին ժանտախտով  
թունաւորուած շիճուկով, առաւել մեծ յաջո-  
ղութիւն ունեն նախազգուշական պատաս-  
տումները, ինչպէս այդ անում ենք ծաղիկի  
դէմ կուսելու համաճարակների ժամանակ:

Այդ շիճուկը ստացում է ձիու արիւնից:  
Չիու արեան մէջ մտցնեմ են ժանտախտի  
միկրոբը, դրանով թունաւորում է կինդանին  
և մի քանի օր ձին սկսում է տարացնել: Եթը  
որ տաքութիւնը իջնում է, սրսկում են նորից  
և այսպէս մի քանի անգամ կրկնելով՝ ձին ըն-  
տելանում է թոյնին, այնպէս որ այլքս թոյնը  
նրա վրայ չի աղում:

Այնուհետեւ ձիու երակը կտրում են և ա-  
րիւն են թողնում, Արիւնը օդի մէջ առժամա-  
նակ մնալով՝ բաժանում է երկու մասի. ջրա-

յին մասը, որ շիճուկ է կաշում, բաժանում է  
լերգանման մասից. վերջինս իբրև անդէտք  
բան, գէն են ձգում: Ենա այս շիճուկին է, որ  
սրսկում են մարդկանց կաշու տակը, ինչպէս  
զիֆտերիտով հիւտնդներին են անում և այս  
միջոցով համարեա հիւտնդների կէս մասը ա-  
ռողջանում է: Ժանտախտով շը վարակուելու  
համար կարելի է զգուշութեան համար առա-  
ջուց պատուաստել տալ, ինչպէս ծաղիկի պատ-  
ուաստելը: Այդ խորհուրդը տալիս ենք մանա-  
ւանդ համաճարակի ժամանակ:

Որպէսզի համաճարակը շտարածուի եր-  
կրից երկիր, տէրութիւնները կտրում են ամեն  
յարաքերութիւնն վարակուած տեղերի հետ:  
Այդպիսի տեղից եկած ապրանքները նախա-  
պէս զգուշութեամբ տխտացնուն են անում և  
ապա թոյլ տալիս երկրի մէջ մտնելու: Այդ  
արգելը, որ կոչում է կարտնտին, կատար-  
ում է այսպէս: Այն կէտերում, սրտեղից  
մտնում է կասկածելի երկրից եկող ապրանքը  
կամ մարդիկ, զօրքեր են կանգնեցնում և սը-  
րանը թոյլ չեն տալիս տռանց ոկզրնական  
քինութեան երկիր մտնել: Նշանակուած թժիշկ-  
ները նայում են բոլոր անցնողներին, թէ մի  
գուցէ հիւտնդներ լինեն մէշերը: Հիւտնդնե-

բին ջոկում են և պահում են հիւանդանոցում,  
իսկ մնացածներին պահում են մօտ երկու  
շաբաթ։

Եթէ նրանց մէջ հիւանդներ լինեն, բայց  
գեռ հա զավտի շրջանում, այդ երկու շաբա-  
թում կերեայ հիւանդութիւնը. իսկ եթէ այդ-  
քան միջոցում հիւանդութիւնը չնկատուեց,  
անցածուցիթ են տալիս ու թողնում իրանց  
սահմանները։

Պարզ է, որ ինչպէս մարդկանց լրաց հի-  
ւանդութիւններն են քննում, այնպէս էլ նր-  
անց բոլոր իրերը զանազան միջոցներով ախ-  
տացնից են անում և ապա յանձնում տէրե-  
րին. Այս գլուխում ժաղարդի պարտքն է, ա-  
ջակցել տէրութեանը, որ մեր օգոսի համար  
հաստատում է կարանտինը։ Եթէ մենք իմա-  
նանք, որ մէկը տռանց տնցածզգի անցնել է  
սահմանը, եթէ ևս մինչև անզամ մեր ամենա-  
մօտ բարեկամը լինի, մեր պարտքն է յանձնել  
նրան աէրութեան ձեռքը, որպէսզի մի զուցէ  
նրա դանցառութեան պատճառով մենք էլ շը  
վարակունիք։

Եթէ չնայելավ բոլոր ձեռք առաջ միջոց-  
ներին, ժանտախտը աարածում է, պէտք է  
գործ գնել մի քանի անհրաժեշտ պաշտպան-

դական միջոցներ։ Այն միջոցներից ամենա-  
առաջին պայմանը մաքրութիւնն է, որովհետեւ  
ինչպէս վերին էլ լիշեցինը, ժանտախտի միկ-  
րորը զարգանում, աճում է կեղտում տեղե-  
րում, նեխուղղ նիւթերով ձածկուած յոժնաւ  
հողի մէջ։ Եթէ խոլերան կամ ժանտախտը  
չնկատանում կամ եղիպտասում յայտնուելիս  
զարհութելի կերպով կոտորում են քնակիչնե-  
րին, այդ նրանից է, որ Գանգէսի և Նեղոսի  
ափերը լիբէ են ատականութիւններով, մարդ-  
կանց ու կենդանիների զիակներով, որոնք  
ջերմ տրեի տակ նեխուելով, փտում են և ա-  
ճեցնում վարտիչ հիւանդութիւնների միկրոր-  
ները։ Այս բանին քիչ չէ օգնում արեկեան  
ժողովրդների վերջին ծայր անմարդասիրու-  
թիւնը։ Ուրեմն մաքրութիւնը խրաբանչուր  
մարզու առաջին հոգոր պէտք է լինի և քանի  
չեն սկսուել վարակիչ հիւանդութիւնները,  
պէտք է մաքրել տունը, բազը, փողոցը և  
այլն։ Բաւական չէ միայն իր սեփական տու-  
նը մաքրու պահելը, ընդհանուր մաքրութիւնը  
պահպանելու համար պէտք է համերաշխ զար-  
ծել, շնորհալով ոչինչ ծախս և աշխատանք։  
Թէի քաղաքային վարչութիւնների գործն է  
հոկիլ մաքրութեան լրայ, բայց ամեն քաղա-

բայի պէտք է իր կողմից գործին աջակցէ,  
համոզուած լինելով, որ իւր անձի ապահովու-  
թիւնը սերտ կերպով կապուած է դրացու ա-  
ռողջութեան հետ:

Որովհետև ժանտախտի թոյնը զարգանում  
է անմարրութիւնների մէջ, այդ պատճառով  
պէտք է գետինը մօրուր պահել ժարդկանց ու  
կենդանիների արտադրութիւններից: Պէտք է  
ունենալ կանոնաբոր արտաքնոցներ և ամեն  
օր այնտեղ կը աջուր լցնել, որը մեսցնում է  
ժանտախտի թոյնը: Եթէ արտաքնոցներում  
հորեր սւնենալը գժուար է, պէտք է անմար-  
րութիւնները լցնել տակառների մէջ և քաղա-  
քից գուրս կրել տալ. յամենայն դէպս, գե-  
տինը չպէտք է թրջել, իսկ եթէ թրջուի,  
պէտք է գետնի խոնաւութիւնը չորացնել մո-  
խիրով: Լուացը ջուրը նոյնպէս ցանկալի է  
լինել առանձին շինած հորերի մէջ, բայց ե-  
թէ հորեր չկան, կարելի է ցրիւ տալ արեկող  
տեղերը, որպէսզի շօւտով ցամաքի: Ազրիւր-  
ների մօտ ոչ մի գէպքում չի կարելի լւացւել,  
չոր կամ ուրիշ իրեր լւալ. ջուր վեր առնելու  
ժամանակ զգուշութեամբ պէտք է վարել, որ  
ազրիւրի շորս կօգնը չթրջել:

Երկրորդ կարենը խնդիրը բնակարանի

խնդիրն է, Բնակարանը պէտք է լինի չոր,  
լուսաւոր և ընդարձակ: Ներքնայալիքը, իր-  
բե խոնաւ, վնասակար են: Ուր որ մի երկու  
սենեակում ապրում են բազմամարդ ընտանիք-  
ներ, այդպիսի տեղերում հեշտ կարելի է վա-  
րակուել: Համաճարակի ժամանակ ցանկալի է,  
որ քաղաքը առանձին վարձած տներ ունենայ և  
այդպիսի խոչոր ընտանիքներին այնտեղ տեղտ-  
փոխէ: Սոհասարակ երբ մի սենեակի մէջ շատ  
մարդ է ապրում, այդ սենեակում օդը սաս-  
տիկ ապականեւում է, մանաւանդ գիշերը: Իսկ  
յայտնի է, որ անմարուր օդը վեասակար է  
մաքուս առաջութեան համար. Համաճարակի  
միջոցին աւելի հո: Ժանտախտի թոյնը յաջող  
զարգանում է փակ օդի մէջ, այդ պատճառով  
պէտք է դուռ-երգիր բանալ: Լաւ է ցուրտ,  
բայց մարուր օդում լինել, բան թէ անմա-  
րուր տար օդ ներշնչել:

Նկատուած է միշտ, որ ժանտախտը հե-  
տիւում է պատերազմներին, ոսպին, ժողովրդա-  
կան աղետների միջոցին, երբ ժողովրդի ոտուար  
մեծամասնութիւնը ուտելիք չէ ունեցել, այն  
ժամանակ ժանտախտը վրայ է հասել և մի-  
լիոնաւոր մարդիկ կոտորուել են ուտելիքի  
պակասութիւնից կամ վատ մնունդից: Լաւ օ-

բինակ կարսող է, լինել չեդիաստանի վերջին  
համաճարակը, եթք ժաղավրդի մի մասը կո-  
տուրում էր սովորց: Ժանտախտի ժամանակ  
թշուախն օգնել, կերակրելը ոչ թէ միայն  
բարի գործ կատարել է նշանակում, այլ զա-  
խերեալաշտպանութեան միջոց է: Այդ է պատ-  
ճառը, որ ժանտախտի ժամանակ ամեն աեզ  
շտապում են յանձնաժողովներ կազմակերպել  
ժողովրդին օգնելու համար, որոնք հիմնում  
են ձրի ճաշարաններ և թէյատներ: Օրանց  
գործն է տալ մարդկանց ոնունդ, նոյնպէս և  
հոգալ ազգարնակութեան մաքրութեան վրայ:

Համաճարակի ժամանակ ներելի չէ շա-  
փազանց ֆիզիքական աշխատութիւնները, ո-  
րոնցով մարդուս կենսական սյժերն սպառ-  
ում են և տրտմագրութիւնն է ծագում հիւան-  
դախուու: Նուազած, ուժից ընկած մարդու  
վրայ թոյնի աւելի է ազգում, որովհետեւ մար-  
դուս թոյլ կազմուածքը չի կարող գիմազրել  
թոյնի աւելիչ զօրութեանը: Այդ է պատճա-  
ռը, որ ժանտախտով աւելի շուտ վարակում  
են աբրեցողները, անկանոն կեանք վարողնե-  
րը, որոնց բայրայուած մարմինը իսկոյն են-  
թարկում է հիւանդութեան:

Ժանտախտից վախեցող մարդիկ ընկնում

են նեարգային գրութեան մէջ և տրամադըր-  
ուում հիւանդանալու: Վախոկոտ մարդը շարու-  
նակ լարուած գրութեամբ մտածում է ժան-  
տախտի մասին: Նա վախենում է ուտել, խը-  
մել, ամեն մի չնշին ցաւ նրան ձգում է ան ու  
գողի մէջ: Այդպիսիները գիշեր ցերեկ հան-  
գիստ չունին, որի պատճառով թուլանում է  
մարմինը անսնունդ մնալուց և անհանգստու-  
թիւնից, բայրայուում են նեարգերը, այնպէս  
որ տրամագրուում է շաւոսվ վարակուելու: Մը-  
րանց անհրաժեշտ է ունենալ հոգու արիու-  
թիւն: Թէ՛մե հիւանդութիւններից չը պէտք է  
շփոթուեն ու զլուխները կորցնեն և համոզ-  
ուած պէտք է լինեն, որ ժանտախտին անզամ  
կարելի է յաղթել:

Քանի որ մկները մարդկանցից շուտ են  
վարակուում, ուստի պէտք է ամեն կերպ աշ-  
խատել նրանց կստորել: Պէտք է տան մէջ  
զտնուած ծակերը ծածկել և չը թողնել, որ  
նրանը գուրս գան, կամ թակարգներով, զե-  
զերով ոչնչացնել: Վերջերս մեծ յաջուսութեամբ  
օգտուում են այսպէս կոչւած «մկան տիփ» գե-  
զով (մասնակի տիփ), որը կարելի է ձևոր  
բերել բոլոր զեզատներից:

Նոյն զգուշութիւնը պէտք է գործ դնել

ճանձերի վերաբերութեամբ. Հարկաւոր է նրանցից պաշտպանել ուտելիքները, մանաւանդ մրգերը. թէ տներում և թէ խանութեներում պէտք է ծածկել մրգերն ու ուտելիքները:

Հում նիւթերն առհասարակ եղկիւզալի են, Եփած ուտելիքը կասկածելի չէ, սրավհետե, ինչպէս գիտենք, ժանտախտի միկրօբը 60 աստիճան առարութեան մէջ ոչնչանում է: Իսկ եթէ ուտելիքը չի կարելի եփել, զսէ պէտք է մաքար լուսանալ:

Հիւանդութեան օրեէ պէտքաւմ շպէտք է զանցառութեան տալ և քժիչի հրաւիրել:

Համաճարակի ժամանակ մեծ ծառայութիւն են մատուցանում հիւանդանցները, միայն ցաւալին այն է, որ ժողովուրդը հաւատով չի վերաբերում պէտի այս հիմնարկութիւնները. Մարզիկ սխալւում են, կարծելով, որ իր թէ այնտեղ ուղարկում են միայն անյոյ հիւանդներին և այնտեղ մտնելուց յետոյ այլիս զուրս գալ չի կարելի. Յյու կարծիքին հակառակ, հիւանդանցում կան այնպիսի յարմարութիւններ, որպիսին աղքատները երեք իրանց, տներում չունին, Այնտեղ թէ ընակարանը, թէ ուտելիք-խմելիքը, թէ պաշտպանո-

զական միջացները լաւ են, և որ գլխաւորն է, հիւանդը գտնւում է միշտ բժշկի հսկողութեան տակ:

Եյս էլ պէտք է գիտենալ, որ հիւանդին տանից հեռացնելին էլ պակաս բարիք չէ, բանի որ հիւանդի ներկայութիւնը տան մէջ մըշտական սպասնալիք է ընտանիքի միւս անդամներին: Հեռացնելով հիւանդին տանից, գրսնով հեռացրած կլինիք վարակման աղբիւրը:

Եթէ հիւանդը տանն է բժշկում, նրան պէտք է առանձին սենենակ յատկացնել և հիւանդին միայն մէկ մարդ պէտք է, ինեամէ, իսկ այդ խնամովը ոչ ոքի հետ շպէտք է յարաբերութիւն ունենայ: Հիւանդի փոխնորովը, շորերը և այլ իրեղները աւելի լաւ է, այրել, իսկ ինչ որ չի կարելի այրել, պէտք է ախտահանել: Հիւանդի առօղջանալուց կամ մեռնելուց յետոյ նրա ընակարանը պէտք է ախտահանել բժշկի միջացով, Ժանտախտի գէմ ամենալաւ ախտահանիչ միջոցը կրակն է: Ժանտախտով վարակուած իրերը այն աստիճանի երկիւրալի են, որ լաւ է նրանց ոչնչացնել, քան թէ ինեայիլ և շարունակ երկիւրի մէջ լինել: Եթէ այրելի անհնար է, պէտք է ոյլ իրեղները լաւ եփ տալ եռցրած ջրում,



յիտոյ սապսնով լուանալ և չօրացնել։ այսուր  
չամաճարակի ժամանակ պէտք  
է միշտ տանիը ունենալ հետեւալ ախտահանիշ  
միջացները։

1) Յարմարին ու էժանը կիրին է։ Յանկա-  
լի է, որ ամեն տակ մէջ կիր լինի և ունենալ  
կրի մեծ պահեու։ Զոր կիրը ցանում են ուղ-  
ղակի հիւանդի արտադրութիւնների և բոլոր  
կեզառութիւնների վրայ։

2) Կարբօրկա կամ կարբօրեան թթւութը,  
որից կազմում են հետեւալ խառնուրդը։ Վեր-  
ցնում են մի թէյ գգալ կարբօրկա, խառնում  
են մի բաժակ ջրի հատ։ Այս խառնուրդը (2 մ.  
— 100 մ.) կարելի է զործ ածել հիւանդապա-  
հի ձեռները լուանալու համար, իսկ կեզառու-  
թիրը լուանալու համար պէտք է զործ ածել  
երկու անգամ սաստիկ խառնուրդ։

3) Սուլիման (սուլիմանի) ամենազօրեկ  
ախտահանիշ միջոցն է, որը սաստիկ թօյն լի-  
նելով՝ կարելի է զործ ածել միայն բժշկի  
խորհրդով։

Հիւանդներին առաջին օգնութիւն տալու  
համար մինչեւ բժշկի գալը կարելի է տալ հետեւալ գեղերը։ 1) Վալերիանի կաթիլներ, 2) Հօֆ-  
մանի կաթիլներ, 20 կաթ, մի հացի գդալ ջրի հետ։



34462

36

մ7

D

ՄԵՐ ԱՃԽԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խոլերա (թ. տպագրաւթիւն . . . 5 կոպ.  
Դիֆտհիրիա . . . . . 5 կոպ.  
Տրախոմա . . . . . 5 կոպ.

Գուճարով զեռզերին լինում է զիջում:

Հայ

Դիմի Ալեքսանդրով,

Доктору Н. Теръ-Саакянъ

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0074825

